ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. մայիսի 22 թիվ 52 -Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և 1.15 կետի <<զ>> ենթակետի պահանջներով ***կարգադրում եմ***՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալությամբ տրամադրելու օրինականությունն ուսումնասիրող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. 10-օրյա ժամկետում իրականացնել ուսումնասիրություններ և արդյունքների մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012 թվականի մայիսի 22-ի թիվ 52 -Ա կարգադրության

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Արամ Արսենյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
2. Յուրա Ազատյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
3.Գևորգ Օհանյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
4.Լևոն Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ